Նվարդ Վարդանյանը բանագետ է, ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի Ակդ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ:

Նվարդ Վարդանյանը (ծնվ. 1980թ.) ավարտել է ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատը, մագիստրատուրան և ասպիրանտուրան (1996-2005թթ.):

2006թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Բանահյուսություն» մասնագիտությամբ՝ վաստակաշատ բանագետ Սարգիս Հարությունյանի գիտական ղեկավարությամբ: 2009թ. ատենախոսության հիմքով հրատարակվել է Ն.Վարդանյանի «***Հայոց իրապատում հեքիաթը. Ժանրային-տիպաբանական քննություն***» մենագրությունը:

2005թ.-ից աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ «Բանահյուսության տեքստաբանություն» բաժնում: Այստեղ աշխատել է նախ որպես լաբորանտ, այնուհետև՝ կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող: 2021թ.-ից Ն.Վարդանյանը նույն ինստիտուտի «Հայ բանագիտություն» բաժնի ավագ գիտաշխատող է:

2006թ. Ն.Վարդանյանը աշխատանքի է անցել ԵՊՀ Հայ գրականության պատմության ամբիոնում՝ որպես ասիստենտ, 2017-ից մինչ օրս աշխատում է նույն ամբիոնում՝ որպես դոցենտ: Ամբիոնում աշխատելու տարիներին դասավանդել է «Հայ ժողովրդի բանահյուսություն», «Սասնա ծռեր» էպոսը», «Հայ գրականության պատմություն», «Բանահյուսություն և գրականություն», «Դիցաբանությունը մատենագրության մեջ» առարկաները Հայ բանասիրության, ինչպես նաև՝ հումանիտար այլ ֆակուլտետների բակալավրիատում և մագիստրատուրայում: 2023-2024թթ. «Հայ գրականություն» է դասավանդում նաև ԵՊՀ ՍԹԵՄ ավագ դպրոցում:

Ն.Վարդանյանը հինգ տասնյակի հասնող գիտական հոդվածների հեղինակ է, զեկույցներով հանդես է եկել հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում: Հետազոտությունները նվիրված են հայ ժողովրդական հեքիաթների, հարսանեկան ծիսաշարի երգերի և բանահյուսական այլևայլ ժանրերի քննությանը, բանահյուսության և գրականության առնչություններին:

Անհատական հետազոտություններից բացի աշխատակցել է նաև տարբեր գիտական խմբերի՝ թեմատիկ ծրագրերի շրջանակներում, որոնց արդյունքում 2015թ. լույս է տեսել երկլեզու կոլեկտիվ մենագրություն՝ «***Հայ ժողովրդական և գրական հեքիաթի արդի հիմնախնդիրները***» (Նվ. Վարդանյան, Ալ. Սեմիրջյան-Բեքմեզյան, Նար. Վարդանյան), 2020թ.

գիտական համահավաք ժողովածու՝ «***Ռուստամ Զալ. հայ-իրանական դյուցազնավեպ***» (կազմ.՝ Ս.Հարությունյան, Հ. Համբարձումյան, Տ.Դալալյան, Ն.Վարդանյան, Ա.Պողոսյան):

2023-2024թթ. ղեկավարում է բանահավաքչական արշավախմբեր՝ ՀՀ մարզերից ժողովրդական խաղային բանահյուսության, արցախյան ավանդազրույցների գրառման նպատակով: Ն.Վարդանյանը կազմել և խմբագրել է գիտական հանդեսների առանձին համարներ, ընդգրկված է գիտական հանդեսների խմբագրական կազմերում («*Ոսկե Դիվան*» հեքիաթագիտական հանդես, «*Армянский гуманитарный вестник*» պարբերական):

Համագործակցել է նաև տարբեր գիտակրթական, կրթամշակութային ծրագրերի՝ որպես փորձագետ: Դրանցից են՝ «Հայ ասպետ» հեռուստասեսային մրցախաղը (2009թ), Թումանյանի թանգարանում իրագործվող «Յոթը սարի ետևում» կրթամշակութային, հայրենաճանաչողական մրցույթ-փառատոնը (2020-2023թթ.):

Ն.Վարդանյանը ամուսնացած է, ունի երկու դուստր: